ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔԸ ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 10-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

Դեկտեմբերի 3-ին Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրան Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերշաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանձնեց Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի նամակը՝ ուղղված Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, 1988 թ. երկրաշարժի 10-րդ տարելիցի առիթով:

«Կյանքն այսօր հաղթանակել է: Հայաստանը հաղթահարում է անկախությանը և զարգացմանը առնչվող խոչընդոտներն ու պարզորոշ կերպով ամրապնդում իր ինքնությունը», - ասվում է Ֆրանսիայի նախագահի նամակում:

Պարոն Լեգրան շուտափույթ ապաքինում մաղթելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, միաժամանակ շնորհավորեց Սրբազան Հորը՝ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ նշանակվելու կապակցությամբ:

Վեհափառ Հայրապետի և իր անունից Գարեգին արքեպս. Ներսիսյանը շնորհակալություն հայտնեց Հայաստանի Հանրապետության նկատմամբ Ֆրանսիայի նախագահի և ժողովրդի ցուցաբերած ուշադրության համար և հավաստիացրեց, որ ամեն ինչ կանի՝ արդարացնելու Վեհափառ Հայրապետի վստահությունը, ջանք չի խնայի՝ իր վրա դրված պարտականությունները կատարելու ընթացքում: Փոխանորդ Սրբազանը միաժամանակ ուրախությամբ տեղեկացրեց, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիվանդությունը կանխված է, իսկ ապաքինումն ընթանում է բարեհաջող:

Հանդիպման ընթացքում շոշափվեցին նաև հայ-ֆրանսիական հարաբերությունների հետագա զարգացմանն առնչվող հարցեր՝ մասնավորապես կրթական ասպարեզում:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ